

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԷ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերյան աղետը սրտաշարժեց ողջ մարդկությանը: Համամարդկային եղավ նաև աջակցությունը: Անշուշտ առավել տագնապեցին հայ ժողովրդի զավակները ի սիյուս աշխարհի: Եվ արձագանքեցին ով ինչով կարող էր: Մայր Հայրենիքին աջակցելու իր պատրաստակամությունը շտապեց հայտնել նաև Սփյուռքի հայ կաթողիկե համայնքը՝ ի գլուխ ունենալով Հովհաննես-Պետրոս ԺԷ կաթողիկոս-Պատրիարքին:

Նորին Սրբությունը իր շքախմբով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց դեկտեմբերի 29-ին: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Վեհարանում պաշտոնապես ընդունեց կաթողիկոս-Պատրիարքին և նրա շքախմբի անդամներին: Ապա բարձրաստիճան հյուրերը եղան Մայրավանքի թանգարաններում:

Դեկտեմբերի 30-ին նրանք այցելեցին Մատենադարան, ապա նրանց ընդունեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիկ. Ստեփան Վարդանյանը: Հանդիպման ջերմ և գործարար մթնոլորտում զրույց ծավալվեց երկրաշարժի հետևանքների վերացման գործին հայ կաթողիկե համայնքի բերելիք օժանդակության մասին:

Դեկտեմբերի 31-ին հայ կաթողիկե Եկեղեցու գլուխն ու ներկայացուցիչները մեկնեցին Լենինական՝ սեփական աչքերով չափելու մեր ժողովրդի ողբերգությունն ու շեն ու շենշող քաղաքի ավերումը: Հյուրերը Մայր Աթոռ վերադարձան սրտաբեկ, բայց և պատրաստակամ իրենց առավելագույնը կատարելու՝ Մայր Հայրենիքի ավերված քաղաքներն ու գյուղերը վերականգնելու համար:

Նորին Սրբություն Հովհաննես-Պետրոս ԺԷ կաթողիկոս-Պատրիարքը իր շքախմբով Մայր Հայրենիքից մեկնեց հունվարի 3-ին:

ԹՂԹԱԿԻՑ